

Երկու կեանքեր՝ նուիրումը հայ ժողովուրդը փրկելու յաւէտ կորուստէ, միասնաբար կը խորհին ու կ'որոշեն հայ գիրքերու ստեղծումով՝ թուժք կանգնել քաղաքական ու կրօնական կեանքին ըստ պառնացող էործանիչ հեղեղին դէմ, որ մեր պատմութեան Դ. դարու վերջին քառորդին պատրաստուած էր կլանելու մեր ժողովուրդը: Գիրքեր հնարելը չէր մեծութիւնը դործին, այլ զանոնք կիրարկելը՝ կէս դարու տեսողութեան, ամբողջ ժողովուրդ մը կերպարանափոխ ընելու, հեթանոսութենէ դէպի քրիստոնէութիւն, անգրագիտութենէ դէպի հայ մշակոյթ առաջնորդելով մեծ զանգուածը ժողովուրդին, եւ հայ լեզուն Եկեղեցիէն ներս մտցնելով՝ ժողովուրդին սրտին մէջ դրոշմելու Քրիստոսի պատգամը, եւ անոր հետեւանք եղող քաղաքակրթութիւնը: Որուն դէմ ո՛չ պարսկական սուրը եւ ո՛չ արիւնարբու եաթաղանը յաջողեցան յաղթող հանդիսանալ: Այս էր արդիւնքը այն դործին՝ որ երկու ամոլներու ամբողջ կեանքը արժեք: Գիշերը ցերեկին խառնելով, ցուրտը տօթին, ձմեռը ամրան, անխոնջ աշխատեցան հիմնելու դըպրոցներ, ուսուցանելու անդադար՝ մանուկ մտքերու մէջ դրոշմելու համար նորահայն գիրքերը հայկական. եւ անով արձանագրելու մագաղաթի վրայ՝ մեծասքանչ բարբառով աստուածային պատգամը կենսատու, որպէսզի դարերն ի վեր ելլէ ու հասնի մինչեւ հեռաւոր սրտերը ապագայ սերունդներու:

Ո՞վ կրնայ խորհիլ թէ այս մեծղի դործին հեղինակը՝ Մաշտոց, եղաւ խոնարհ սպասարկու մը, որուն համար կը վկայէր մեր Պատմահայրը, թէ «Ամբարտաւանութիւն եւ մարդահաճութիւն երբեք

տեղի չկրցան դառնել անոր կեանքին մէջ»:

«Դէմքով հրեշտականման, մաքուր հանձարեղ, խօսքով աղղեցիկ, դործով ժուժկալ, մարմնով դեղատեսիլ, հաւատքով ուղիղ, յոյսով աննկուն, սիրով անկեղծ, ուսուցիչը եղաւ անձանձրոյթ՝ ամբողջ կեանքի ընթացքին»:

Արդէն զինուորական կեանքին մէջ՝ սիրելի եղած իր զինակիցներուն, համակրանքը կը վայելէր իր իշխանաւորներուն: Բայց երբ Աստուծոյ ծառայութեան մէջ մտնելով՝ նուիրեց ինքզինքը բոլորանուէր իր դադափարականին, կատարելապէս կերպարանալից եղաւ Քրիստոսի: Զգնողական կեանքի բոլոր խտութիւնները կրեց՝ ճգնաւորի մը հաւասար. բայց Քրիստոսի օրինակէն մղուած՝ թողուց անապատը, իջնելու ժողովուրդին մէջ, եւ անոր կարօտութիւնները իր անձին փորձով ճանչնալու եւ դարմանելու: Այդպէս յղացաւ մեծ խորհուրդը գիրքերու գիւտին: Ու մոռցած ինքզինքը՝ զոհեց իր կեանքը «ուսուցանելու անձանձրոյթ», ինչպէս կը գրէ Խորենացի: Ո՛չ ճամբորդութիւններու երկարութիւնը յոգնեցուց զինք, ո՛չ թաղաւորներու տեսիլը ահաղեց, ո՛չ սահմաններու զանազանութիւնը արդելք հանդիսացան անոր կորովի կամքին դիմաց:

Այս առաքինութիւններով՝ Մաշտոց մինչեւ այսօր տիպար դադափարականը կը մնայ թէ՛ հայ ուսուցիչին եւ հայ մըտաւորականին, թէ՛ հայ զինուորականին ու հայ քաղաքացիին, բայց մանաւանդ՝ հայ եկեղեցականին ու վարդապետին:

(Վերջ)

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

ՏԱՆԹԷ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

(Շար. տե'ս «Բազմալեզ» 1966, Բ. 1-3, էջ 38)

ՔԱՒԱՐԱՆ

Դժոխքի նկարագրութեան բաղդատմամբ՝ Քաւարանի մէջ ամէն բան կը լուսաւորուի, կ'ազնուանայ, ներդաշնակ կը դառնայ:

Ոհ, ո՛րչափ տարբեր են այս մոլորքերը Դժոխքիներէն. հոս երգերով է որ կը մտցուի, Մինչ հոն վարը՝ վայրագ կոծերով:

Քաւարանը կը խաղաղէ հոգին, իրեն բաց երկինքներուն տեսիլներով, եւ իրեն բաց երկինքներուն տեսարաններով: Կը զգաս ազատ ծովային տեսարաններով: Թէ ա՛լ յաւերժական ցաւին, տանջանքներուն, ժահահոտ եւ փակ անդունդներուն մէջ չես, այլ՝ յոյսի լուսաւոր լեռան շրմէն, ջանակներէն կը բարձրանաս դէպի վեր, եւ նայուածքդ դէպի անսահմանը կը սըլանայ. թոքերդ մերձաւոր խաղաղութեան անոյշ բոյրերը կը շնչեն: «Արեւելեան շափուղային գոյնն անոյշ» երեւանալով քերթովին՝ հաղիւ դուրս ելած «մալով քերթովին» հաղիւ դուրս ելած «մահարոյր օղէն»՝ որ անոր աչքերն ու հոգին տխրեցուցած էր, կու տայ անոր գեղեցկութեան տեսիլը եւ վայելքը: Երեկոյեան դէմ մտած էր Դժոխքին մէջ, որովհետեւ խաւարը կը նպաստէր եւ կ'ընդհանար մեղքին: Երբ «Առաւօտեան ժամուն յաղթէր արշալոյսն», կը սկսի Տանթէի ուղեւորութիւնը Քաւարանին մէջ: Հոն կը գտնեն Կատոն Ուտիկեցին, որ տեղւոյն պահապանն է. Տանթէ կը մօտենայ անոր յարգանքով, Վերգիլիոս կը բանալի իրենց ուղեւորութեան նպատակը: Հեռուն, ծովին վրայ, լոյս մը կ'երեւի, որ երթալով աւելի կը փայլի:

Նաւ մըն է, հոգիներով լի, որոնք կու գան սրբուելու. կը լսուի անոնց երգելը քաղցրաձայն «Յելանելն Իսրայէլի յեղիպտոսէ» սաղմոսը: Հրեշտակ մ'է նաւին առաջնորդը, որ երկնատարած թեւերով կը բերէ նաւը: Ափը հասնելուն՝ կը խաչակնքէ նաւէն դուրս ելողները: Տանթէ այդ հոգիներուն մէջ կը նշմարէ իր մէկ ծանօթը, Քաղեյա անունով նշանաւոր երգիչը, որմէ կը խնդրէ որ անգամ մը երգէ. ան ալ՝ Տանթէի դրած քերթութեամբ կ'երգէ անոյշ ձայնով. «Մէրը՝ որ մտքիս մէջ կը խօսի ինծի», քերթովին սիրտը կը յուզուի եւ կը հրճուի: Հակառակ կողմէն՝ հանդարտ քայլերով կը յառաջեն խումբ մը մարդիկ խորդ ու խաւարագած՝ աչքերնին գետին, «Ողորմեա ինձ Աստուած» սաղմոսելով: Ծամբուն վրայ կը տեսնեն մէկը՝ սէզ կեցուածքով, արհամարհոտ, բայց ազնուական աչքերով. կը մօտենան անոր՝ դրտնելու համար վեր ելլելու կարճ ուղին. ան չի պատասխաներ, ուղելով գիտնալ թէ ո՛վ են եւ ուսկից կու գան: Հաղիւ թէ Վերգիլիոս «Մանթովա» անունը կու տայ, կը ցատկէ տեղէն եւ կը գրկէ Վերգիլիոսը, «ես մանթովացի Սորտելլոն եմ, քու հայրենակիցդ» ըսելով. ասոր վրայ Տանթէ՝ կորովի չքնաղ բացականչութիւն մը կ'ընէ, Իտալիոյ եւ մանաւանդ Ֆիրենցէի, որ գիրքին ամէնէն սքանչելի հատուածներէն մին է. «Ա՛հ, ստրուկ Իտալիա, ցաւերու օթարան. նաւ՝ առանց նաւաւարի մեծ փոթորկի ատեն» եւայլն: Սորտելլոյ ընկերակցութեամբ կ'ելլեն լե-

րան դուրսը դադարեց. հովիտ մը ան-
ծայրածիր... «Զուտ ոսկին ու արծաթը,
ծիրանին ու պաղպաղուն սպիտակը, լու-
սացնցուղ ու պայծառ հնդկական փայտը,
թարմ զմրուխտը ու շափիւղան», այս բո-
լորը ոչինչ են այն հովիտին ու ծաղիկ-
ներուն բաղդատմամբ...: Բնութիւնը ո՛չ
միայն երկնանկարած էր, այլ եւ ցանած,
սփռած էր հազարաւոր բուրմերու ա-
նուշխութիւնը... Հոն, հողիները աչքեր-
նին դէպի վեր, նստած խոտերուն ու ծա-
ղիկներուն վրայ «Ողջ լեր Թադուհի»
կ'երգէին:

Մութը կը տարածուի լերան եւ հովի-
տին վրայ. հողիներէն մին բաժնուելով
խումբէն, ձեռքերը վեր կը բարձրացնէ,
աչքը սեւեռած դէպի արեւելք, անոյց մե-
ղեղի մը կը սկսի. «Զքեղ յառաջ քան ըզ-
վախճան լուսոյ» բառերով, որ մեր ժա-
մերգութեան «Նկեսցէ»ին կամ «Հանգըս-
տեան» ժամուն կը համապատասխանէ:
Բոլոր միւսները կը միանան անոր, աչ-
քերնին դէպի երկինք դարձուցած: Եւ ա-
հա երկու հրեշտակներ կը սաւառնին
բարձունքէն, հրաշէկ սուրբերով: Անոնց
զգեստները՝ կանանչ, նորաբուսիկ տե-
րեւներու նման էին. մին՝ դէպի վեր, եւ
միւսը՝ հովիտին զիմացի ափունքը կ'իջ-
նէ, հողիները անոնց միջեւ կը մնան:
Սորտելոյ՝ որ ծանօթ էր տեղւոյն եւ սո-
վորութիւններուն, «երկու հրեշտակները
Մարիամի օթարանէն կու գան, կ'ըսէ,
պահպանելու համար հովիտը օձէն որ
դալու վրայ է»: Քիչ վերջ Սորտելոյ կ'ը-
սէ. «Ահա մեր ոսկը»՝ այն կողմը, ուր
հովիտը ափունք չունէր՝ օձ մը կար,
թերեւս ան որ դառն պտուղը կերցուց Ե-
ւային: Խոտին ու ծաղիկներուն մէջէն
կու գար սահելով անիծեալ սողունը,
մերթ ընդ մերթ գլուխը ապրին անդին
դարձնելով: Այն ատեն հրեշտակները
փայլակի պէս կը սաւառնին դէպի անոր
կողմը. խոյս կու տայ օձը հազիւ թէ դա-
նոնք կը տեսնէ:

Տանթէ յոգնած՝ խոտին վրայ գլուխը
գրած կը քնանայ. երազին մէջ կը տեսնէ
ոսկեփետուր արծիւ մը. թեւատարած կը

սաւառնի, օդին մէջ քանի մը պտոյտ
կ'ընէ, եւ կայծակի պէս իջնելով՝ կ'առ-
նէ, կը տանի զինքը մինչեւ հրեղէն դուն-
տը: Քիչ յետոյ կ'արթննայ, երբ արեւը՝
երկու ժամէ ի վեր ծագած էր երկնակա-
մարին վրայ. կը գտնէ ինքզինքը դուարթ,
ծիծաղկոտ բարձրատափի մը վրայ: Այդ
արծիւը Լուչիան էր որ զինքը հոն բերած
էր, եւ Վիրգիլիոս հետը բարձրացած
էր:

Քաւարանի մուտքին առջեւ կը գտնե-
ւէին. բայց խրամատ մը կը բաժնէր զի-
րենք անկէ: Դուռ մը կար, ուր ելլելու
համար՝ զանազան գոյներով երեք աստի-
ճաններ կային. առջեւ՝ դռնապանը նըս-
տած էր, ձեռքը փայլուն սուր մը: Ուս-
կից կու գար, հարցուց. ո՞վ է ձեր առաջ-
նորդը: Երկնային տիկին մը, պատաս-
խանց Վիրգիլիոս, մեղի ըսաւ. «Ելէ՛ք,
հոն է ահա դուռը»: Եւ դռնապանը հրա-
ւիրեց զիրենք ելլել աստիճաններէն: Ստո-
րին աստիճանը՝ ջինջ մարմարինէ՝ փայ-
լուն էր հայելիի պէս. երկրորդը՝ աւե-
լի մութ՝ քան ծիրանեղոյն, անհարթ
ու խանձատեալ քարէ. երրորդը՝ փայ-
լուն, արեւադոյն պոքիւրէ: Աստուծոյ
հրեշտակը ասոր վրայ դրած էր ոտքերը,
աղաքանդի երեւոյթ ունեցող չեմին վրայ
նստած: Հրեշտակը Տանթէի ըսաւ. «Խն-
դրէ՛ խոնարհութեամբ որ կ'զայնքը բա-
նայ»:

Տանթէ կ'իյնայ հրեշտակին ոտքը, կ'ա-
ղաչէ որ զթայ ու բանայ դուռը, երեք
անգամ բախելով կուրծքը: Հրեշտակը
սուրին ծայրով եօթը Մ զիրը (մեղք) կը
դրոշմէ ճակատին վրայ ըսելով. Երբ ներս
մտնես՝ լուա՛ այս վէրքերը:

Ապաշխարութեան հրեշտակն էր որ մո-
խրագոյն զգեստին տակէն հանեց երկու
բանալիներ, մին՝ ոսկի, միւսը՝ արծաթ.
նախ արծաթով, յետոյ ոսկիէ բանալիով
բացաւ դուռը: Այն բանալիները՝ ընդու-
նած էր Պետրոս առաքեալէն, որ յանձնա-
բարած էր հրեշտակին՝ սխալի աւելի
դուռը բանալուն մէջ քան թէ դոյ պահե-
լուն: Յետոյ հրեց նուիրական դրան թե-
ւը. ներս մտան: Քաղցրահնչիւն նուագ մը

հասաւ իրենց ահանջին. արդար հողիներ-
ը կ'երգէին. «Զքեղ Աստուած զովարա-
նեմք»: Իրենց ետեւէն փակուեցան դռնե-
րը ահագնազորդ ճոնչիւնով:

Վեր ելան, տեսան զաշտ մը ամայի,
ուր վճիտ մարմարէ ժայռ մը կար, որուն
վրայ քանդակուած էին հրաշալի արուես-
տով՝ Սուրբ Կոյսին Աւետումը. Գարբիէլ
հրեշտակապետը այնպիսի անոյց ու կեն-
դանի կեցուածք մը ունէր, որ կարծէք
դեռ կը խօսէր. «Ուրա՛խ լեր, Մարիամ»:
Աստուածամայրն ալ կարծէք «Ահաւասիկ
կամ աղախին Տեառն» կը պատասխանէր:
Ասոր նման ուրիշ յուզիչ ու գորովիչ
պատկերներ կային, որոնք մարդուս միտ-
քը եւ սիրտը կը զմայլեցնէին:

* * *

Այս հիանալի տեսութիւնը ցնդեցաւ.
հեռուն, բաղմութիւն մը հողիներու դան-
դաղօրէն կու գար, զրեթէ գետին հակած.
ծանր քարերու բեռ մը վրանին: Անոնք
հպարտներն էին, իրենց մեղքին պատի-
ւին տակ կ'ըսէին. Երբ մօտեցան, սկսան
նուագել զորովալիւ շէշով. «Հայր մեր
որ յերկինս ես» աղօթքը. կը խոստովա-
նէին թէ իրենց հպարտութեան համար է
որ այդ պատիւը կը կրէին եւ խոնարհու-
թեան ու համեստութեան առաքինութիւ-
նը կը գովէին:

Տանթէի եւ Վիրգիլիոսի զիմաց տաժա-
նելի վերելք մը կար, որուն ծայրը կե-
ցած էր հրեշտակ մը սպիտակազգեստ եւ
լուսաճաճանչ դէմքով, առաւօտեան աստ-
ղին պէս: Բազուկներն ու թեւերը բացաւ
ըսելով. «Եկէ՛ք, ահա մօտ են աստիճան-
ները եւ այսուհետեւ ելքը կը զիւրանայ»:
Տարաւ զանոնք հոն ուր ժայռը կտրուած
էր. թեւերով Տանթէի ճակատին զարկաւ:
Սանդուխէն վեր ելած ատեն՝ զեղեցիկ
երգ մը լսեցին. «Երանի աղքատաց հոգ-
ւով». անբացատրելի քաղցրութիւն մը
ունէր այդ երգը: Հոս է որ՝ կ'ըսէ Տան-
թէ՝ ինքնիրմէ դուրս ելած. «Ո՛հ, ո՛ր-
թէ՛ ինքնիրմէ դուրս ելած. Գոթիքի մուտ-
քան տարբեր է ասիկա՝ Գոթիքի մուտ-
քէն. հոս երգերով կը մտցուի, հոն վա-

րը՝ աղիողորմ հառաչներով»: Քերթողը՝
այս խիստ վերելքին վրայ աւելի թեթեւ
կը զգայ ինքզինքը, քան հարթ դաշտին
վրայ. Վիրգիլիոս կը պատասխանէ. «Երբ
ճակտիդ Մ-երը (մեղքերը) ջնջուին, վեր-
ելքը հաճոյք մը պիտի ըլլայ: Տանթէ
ձեռքը ճակատը կը տանի եւ կը զգայ որ
վեց հատ մնացեր է ճակտին վրայ:

Սանդուխին ծայրն են, բայց ուրիշ լեռ
մըն ալ կայ, անոր վերելքը պիտի ջնջէ
մեղքերը: Քանի մը հողիներ դէպի իրենց
կը թռչնին, շնորհալի կերպով զիրենք ի-
րենց սիրոյ սեղանին հրաւիրելով: Առա-
ջին հողին՝ որ կ'անցնի թռչելով՝ կ'ըսէ
բարձրաճայն. «Գինի ոչ ունին»: Ուրիշ
մը կը գոչէ. «Սիրեցէք ձեզի հարիւր ընող-
ները»:

Այս շրջանակին մէջ կը պատժուին
նախանձոտները: Վերը՝ բարձրութեան
մէջ՝ կը տեսնուին մարդիկ, նստած լե-
րան ժայռին երկայնքին, որոնք վերար-
կուներ հազած կը զիմեն Սուրբ Կոյ-
սին եւ ուրիշ սուրբերուն: Բոլորն ալ
ծածկուած են անարդ խարաղով, իրարու
ուսին վրայ ինկած եւ ժայռին կոթնած:
Երկաթ թելով ամէնուն ալ արտեւանուն-
քը ծակուած է եւ կարուած. զրկուած են
արեւուն ու երկինքին լոյսէն: Այն դար-
հուրի կարուածքը՝ այնպիսի արցունք-
ներ կը կորզէ անոնց աչքերէն՝ որ բոլո-
րովին կ'ողողէ անոնց այտերը: Ասոնց
մէջ ալ կան թոքախտի ծանօթներ, ո-
րոնք արտասուախառն հեծեծանքով կը
պատմեն իրենց յանցանքները. շատ բա-
րի լուրեր, խրատներ եւ կաթողին ող-
ջոյններ կը յանձնեն Տանթէի՝ իրենց աղ-
գականներուն համար:

Երբ անկէ դէպի արեւմուտք կ'երթան,
ահա սաստիկ լոյս մը կը շլացնէ Տան-
թէի աչքերը. հրեշտակ մըն է: Իրենց
ընդառաջ կու գայ եւ զուարթ ձայնով
կ'ըսէ. «Մտէ՛ք ասկէ, ահա սանդուխ մը՝
նուագ զառիւթի քան միւսները»: Վեր
հասնելով երբ մայրամուտին շլացուցիչ
ճաճանչները զիտելով կ'երթային, քիչ
քիչ սկսաւ ծուխ մը բարձրանալ, այնքան
թանձր, մթին, որ կարծես գիշեր էր: Այն

երգելով. «Օրհնեալ դու ի դատերս Այա-
մայ, օրհնեալ յաւիտեան զեղեցիկութիւն
քո»: Անոնցմէ յետոյ կու գան չորս կեն-
դանինք՝ կանաչ սաղարթներով պսակ-
ուած, իւրաքանչիւրը վեց փետրալիւր թե-
ւերով, եւ փետուրները լի էին աչքերով:

Չորս կենդանիներուն միջեւ եղած մի-
ջոցը կը դրաւ երկանիւ յաղթական կառք
մը զոր կը քաշէր արծուառիւծ մը, եր-
կու վիթխարի թեւերով, որոնք այնքան
կը բարձրանային որ չէին տեսնուեր: Այդ
արծուառիւծը, ուր որ թռչուն էր՝ ոսկի
անդամներ ունէր, եւ ուր որ առիւծ էր՝
կարմրախառն սպիտակ: Այս կառքին քով
կը նսեմանային ո՛չ միայն հոռմայեցի
կայսրներուն յաղթական կառքերը, այլ
նոյնիսկ արեւուն զիցարանական կառքը:
Երեք կոյսեր, իւրաքանչիւրը՝ կարմիր,
ձիւնադոյն եւ զմրուխտէ պատմուճաննե-
րով՝ աջակողմեան անիւին մօտ, եւ ու-
րիշ չորս կոյսեր՝ ծիրանազգեստ, ձախա-
կողմը կը պարէին: Անոնց ետեւէն երկու
ծերունիներ, որոնցմէ մին՝ Հիպոկիրա-
տի շատ ընտանի կ'երեւէ եւ միւսը փայ-
լուն եւ հատու սուր մը ձեռքը. անոնցմէ
ետք՝ ուրիշ չորս ծերեր, աւելի համեստ
երեւոյթով, եւ ուրիշ մը՝ կէս քունի մէջ,
հանճարեղ դէմքով. յետոյ, եօթը ծերեր՝
գլուխին կարմրադոյն ծաղկեայ եւ վար-
դէ պսակներով:

Երբ կառքը ձիւտ Տանթէի դիմացը կը
հասնի, որոտում մը կը լսուի. բոլորն ալ
կանգ կ'առնեն վայրկեանապէս: Այդ պա-
հուն երէցները ետ կը դառնան, որոնցմէ
մին՝ «Ե՛կ ի Լիբանանէ, հարսն» երգելով
կը դռէ երեք անգամ, եւ բոլոր միւսները
կը ձայնակցին իրեն: Հրեշտակներէն
խումբ մը վար կ'իջնէ կառքին վրայ, եր-
գելով. «Օրհնեալ որ դասդ», եւ հոն վար-
դեր եւ շուշաններ կը սփռեն բռնալիւր:

Արեւը հաղիւ ծագած՝ պահ մը կը մը-
թընայ, ծաղիկներու ամպ մը կ'ելլէ ու
կ'իջնէ խումբ մը հրեշտակներու ձեռքին
մէջ. անոր վրայ բազմած կին մը, գլուխը
սպիտակ քօղ մը, վրան ձիթենիի պսակ
մը, կանաչ վերարկուի տակ. զգեստը
կենդանի բոցի գոյնն ունի: Տանթէ գրե-

թէ ապահար, ընդարմացած այս տեսա-
րանէն, կը փնտռէ Վիրգիլիոսը որ բա-
ցատրէ իրեն՝ թէ ի՞նչ է այս տեսիլը.
բայց դայն չի տեսներ. կը սկսի լալ: «Մի՛
լար» կը դռէ ձայն մը, «լաւ նայէ՛ ինձի,
Պէտթրիչէն եմ ես»: Անկարելի է նկարա-
դրել Տանթէի ամօթը՝ քան ուրախութիւ-
նը, այդ բառերը լսելուն: Պէտթրիչէ դա-
ռն խօսքերով կը կշտամբէ Տանթէի ան-
կարգութիւնները. Տանթէ ամօթահար,
ակնկոր՝ կը սկսի արտասուել: Այս պա-
հուն Մաթիլտէ, զոր տեսած էր քիչ ա-
ռաջ՝ առուակին միւս ափը, կը բռնէ
Տանթէի գլուխէն եւ ջուրին մէջ կը մը-
խըրծէ, որպէսզի յանցանքներէն սրբուի,
եւ բոլոր խումբը կ'երգէ. «Յօդեա՛ յիս
մշտակաւ, եւ սուրբ եղէց»: Եւ այսպէս
սրբուած՝ կը ներկայանայ չորս կոյսե-
րուն, որոնք կը տանին զինքը Պէտթրիչէի
առջեւ. կը թախանձեն որ ներէ եւ ցոյց
տայ անոր իր դէմքը: Նոյն վայրկեանին՝
Պէտթրիչէ օդին մէջէն կ'իջնէ կառքին
վրայ, եւ սուրբ ծերունիներուն խումբը
կը դառնայ դէպի արեւելք, եւ յաղթա-
կան կառքը կը տարուի և կը կապուի տե-
րեւթափ ծառի մը. այդ հպումով իսկոյն
ծառը կը դարձարուի վարդերով եւ մա-
նիշակներով: Թափօրը կ'անյայտանայ
դէպի երկինք. կը մնան միայն աշտանակ-
ները եւ կոյսերը՝ Պէտթրիչէին շուրջը որ
արդէն իջած է կառքէն. այն ատեն կը
յարձակի արծիւ մը, կը կոտորէ ծառը եւ
բոլոր ուժով կ'ուղէ փշրել կառքը՝ որ ա-
լեկոծ նաւու նման կ'երեւայ. յետոյ կը
յարձակի աղուէս մը, զոր կը փութայ
վտարել Պէտթրիչէ: Եւ ահա նորէն ար-
ծիւը վար կ'իջնէ կառքին վրայ, եւ հոն
կը թողու իր փետուրները: Գետինը բաց-
ուելով վիշապ մը դուրս կու գայ, և այն-
պէս ուժգնօրէն կը բախէ կառքը որ կը
խլէ յատակին մէկ մասը, եւ ծեփածուռ
զալարումներով կ'երթայ կը կորսուի:
Բոպէի մը մէջ, ինչ որ կառքէն մնացած
էր, արծուին փետուրներով կը ծածկուի,
եւ կառքին ղեկէն եւ կողերէն դուրս կը
ցցուին եօթը գլուխներ, երեքը՝ եղջիւ-
րաւոր՝ նման եզերու, եւ միւսները ճա-

կառին վրայ մէկ եղջիւրով: Այդ այլան-
դակ հրէշին վրայ նստած էր լիտի կին
մը, եւ մօտիկը՝ հսկայ մը կանգնած. երբ
կինը չորս կողմը կը շրջէր աչքերը, այն
ատեն վայրագ մարդը կը խարազանէր
կինը, եւ քակելով այն հրէշը ծառէն՝ կը
քշէր, կը տանէր կառքը անտառին խորը
եւ այսպէս կ'անյայտանար այդ հրէշա-
յին խումբը:

Այս տեսիլը՝ այնքան կենդանի գոյնե-
րով եւ խորհրդաւոր պատկերներով ներ-
կայացուած, ազդուած բնականաբար Ե-
ղեկիչի եւ Յայտնութեան դիրքի տեսիլ-
ներէն, կը պատկերացնէ դանադան պա-
տահարները եկեղեցւոյ, որ խորհրդա-
նշուած է յաղթական կառքին մէջ: Եօթը
ճրագարանները՝ Հողւոյն Սրբոյ եօթը
պարզեւներն են, քանչորս երեսները՝
Հին Կտակարանին հեղինակներն ու մար-
դարէները, չորս կենդանիները՝ չորս Ա-
ւետարանիչները, երկու անիւները՝ երկու
Կտակարաններն են, եւ ոսկի արծուառիւ-
ծը հաւանօրէն Քրիստոսի խորհրդանիշն
է. աջակողմեան երեք կոյսերը՝ երեք աս-
տուածաբանական առաքինութիւններն են
եւ միւս չորսը՝ գլխաւոր կամ հիմնական
առաքինութիւնները. Հիպոկիրատի ըն-
տանի ծերը՝ Ղուկասն է, որ բժիշկ էր.
սուր բռնող ծերունին՝ Պօղոս առաքեալը,
միւս չորս ծերունիները՝ կաթողիկէ
նամակներուն հեղինակները, իսկ վերջի-
նը՝ Ս. Յովհաննէս Աւետարանիչը. այն
մերկ ծառը՝ որուն կապուեցաւ կառքը՝
կը նշանակէ Ադամի ծառը, որ քրիստոնէ-
ութեան հպումով ծլեցաւ եւ ծաղկեցաւ:
Արծիւը, որ ուղեց քանդել կառքը, հոռ-
մէական կայսրութեան հալածանքներն

են, աղուէսը՝ հերետիկոսութիւնները:
Վիշապը՝ սատանան է, որ դրաւ անոր ե-
րակներուն մէջ ցանկութեան, ընչաքաղ-
ցութեան թոյնը: Այնպէս որ՝ այն նուր-
րական կառքը՝ որ Աստուծոյ Եկեղեցին
էր, այլանդակուելով անճանաչելի դար-
ձաւ. այն հսկայ մարդը՝ մեկնիչները կը
հասկնան Յրանսան, եւ յատկապէս Փի-
լիպպոս Գեղեցիկ թաղաւորը, որ հար-
ուածեց պապական իշխանութիւնը, Պո-
նիփակիոս Ը. ի օրով, Անանիի մէջ, եւ
Կղեմէս Զ. ի օրով՝ զերի ըրաւ, Աւինիոն
փոխադրելով քահանայապետական աթոռ-
ը:

Տեսիլը կ'անյայտանայ, երբ կառքը
ջախջախուած կը տարուի անտառին խո-
րը: Կը մնան Պէտթրիչէ, եօթը կոյսերը
եւ Տանթէ: Յաւած մեծապէս Եկեղեցւոյ
այս թշուառութեան վրայ, կոյսերը կ'ար-
տասուեն, փոխն ի փոխ «Աստուած, մը-
տին հեթանոսք» սաղմոսը երգելով. Պէտ-
թրիչէ նախ կ'ունկնդրէ սրտաբեկ եւ
հեծեծազին, սակայն երեսին վրայ յան-
կարծ կ'երեւի Ժպիտ մը յոյսի եւ կը մխի-
թարէ Տանթէն, գուշակելով՝ թէ պիտի
գայ հօր իշխան մը՝ որ պիտի ազատէ
Եկեղեցին թշնամիներէն: Եւ յետոյ կը
դառնայ Մաթիլտի՝ որ տանի Տանթէն
Եւնոյէ առուակին ջուրը խմելու, որով
պիտի սրբուի և պիտի զօրանայ, թռչելու
համար երկրաւոր դրախտէն դէպի վեր,
դէպի աստղերուն բարձրութիւնները. հոս
կը վերջանան Քաւարանին երգերը:

(Շար. 3)

Հ. ՅՈՎՀ. ԹՈՐՈՍԵԱՆ